

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

552 R

ԿՈԼԵԿՑԻՎ ՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՎԱՐՈՂՈՒՄՆԵՐԸ


(17 - 21 նոյեմբերի 1928 թ.)



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈԼՏՆՏԵՍԿԵՆՏՐՈՒ

ՅԵՐԵՎԱՆ

1929



ԿՈԼԵՎՏԻՎ ՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(17—21 նոյեմբերի 1928 թ.)

A 8741



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈԼՏՆՏԵՍԿԵՆՏՐՈՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1929

ԹԵՏՐԱՏԻ ՑԵՐԿՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գառակ. № 1673

Դրամ, № 1629 բ.

Տիրամ—1,000

ՎՈՐՈՇՈՒՄ

Ընկ. Հայկ Մերտչյանի զեկուցման առքին

Կոլեկտիվ տնտեսությունների Համահաստանանի առաջին Համագումարը լսելով ընկ. Հ Մերտչյանի զեկուցումը՝ կոլտնտեսությունների շինարարության հերթական ինդիբների և կոլտնտսեկցիայի գործունեյության մասին՝ վորոշեց. —

Բավարար գտնել կոլտնտսեկցիայի անցյալ գործունեյությունը և ընդունել հետեւյալ բանաձեռ.

ԲԱՆԱՁԵՐ

Կոլեկտիվ տնտեսությունների օխնուարության ներքության խնդիրների յեւ կոլտնտսեկցիայի գործունեյության մասին

1. Խորհրդային Միության, ինչպես և Խորհրդային Հայաստանի վողջ ժողովրդական անտեսության վերելքին ու սոցիալիստական արդյունաբերության վերակառուցման զուգընթաց, զյուղում մասնը տընտեսությունների բարձրացման, նրա սոցիալիստական վերակառուցման համար ստեղծվել է ամուր տնտեսական բազա:

Միաժամանակ ՆԵՊ-ի պայմաններում գլուզի կապիտալիստական տարրերի արսովյուտ աճման, նաև տնտեսության սոցիալիստական սեկտորի արագ զար-

զացման շնորհիվ, համեմատաբար ուժեղացել են կուլակ տարբերի տենդենցները՝ դիմադրելու և խանգարելու սոցիալիստական շինարարության թափն ու ծրագիրը (մթերութենք, կոռպերացիայի դեմ և այլն): Դրա հետ միասին խորացել են նաև մի կողմից գյուղի չքավոր—միջակ խավերի և մյուս կողմից կուլակության շահերի հակասությունները և սրվել գասակարգային պայքարը գյուղում:

Կուլակ տարբերի դեմ կազմակերպված տնտեսական պայքարն ուժեղացնելու, սոցիալիստական շինարարության հաղթանակն ապահովելու, գյուղի պրոլետարիզացիայի վտանգը կանխելու համար անխուսափելի պահանջ և դարձել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործի արագացումը:

2. Արդյունաբերության զարգացման թափի հետ զուգընթաց, գյուղատնտեսության հետագա ուժեղ զարգացումը և գրա արտադրողականության, ապրանքայնության բարձրացումը հնարավոր և գյուղատնտեսության մեքենայացման ու ռացիոնալացման միջոցով, վորը կարելի լի կիրառել, գլխավորապես խորհրդային տնտեսություններ և գյուղական մանր տնտեսություններից խոշոր կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու ճանապարհով: Սակայն միաժամանակ Համագումարը նշում և, վոր անհատական տնտեսությունները գեռես խոշոր հնարավորություններ ու անհելիք ունեն գյուղատնտեսության արտադրական ուժերի զարգացման ու ապրանքայնության բարձրացման գործում:

3. 15-րդ կուսամամագումարի արձակած լողունգը՝ «Գյուղ, առաջ զետի խոշոր կոլեկտիվ տնտեսություն-

ներ» — ինչպես խորհրդավին այլ հանրապետություններում, նույնպես և Հայստանում, լայն արձագանք գտավ միջակ և մասնավանդ չքավոր մասսաների մեջ, գյուղում մասսայական շարժում առաջացնելով դեպի կոլեկտիվ տնտեսությունները (1927 թ. ընդամենը 7 կոլեկտիվ, իսկ այժմ՝ 80 կոլեկտիվ):

4. Համագումարը արձանագրում ե, վոր Հայաստանում կոլեկտիվ տնտեսությունների շինարարության բնագավառում, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ունեցել ենք խոշոր նվաճումներ՝ թե ցանցի լայնացման, կոլտնտեսությունների ձեռագործման և թե այդ շարժման գաղափարի մասսայականացման ասպ սրբում: Միևնույն ժամանակ կոլտընտեսությունների զեկավարության ընթացքում նկատելի յեն հետեյալ թերությունները: —

ա) Բացակայում ե կոլտնտեսությունների կազմարարական ծրագիրը.

բ) Բավարար չափով զրկած չե աշխատանքի կազմակերպման ու վարձատրման գործը.

գ) Թուզ ե բարակեների և չքավոր-միջակ գյուղացիների ներգրավումը.

դ) Տեղերի ագրոպերսոնալը բավարար չափով չի սպասարկում կոլտնտեսություններին և այլն:

Ցեղնելով այդ բոլորից համագումարը կոլտնտեսությունների շարժման զեկավարության համար առաջադրում ե հետեյալ: —

ա) Ամեն կերպ ընդառաջ գնալ գյուղում ներքենից առաջացած կոլեկտիվացման մասսայական շարժմանը, դատապարտելով այդ խնդրում

Նկատվող անտեղի վախն ու թերագնահատումը։
Անհրաժեշտ ե ըստամենայնի ապահովել կենտրոնի ղեկավարությունը, շարժմանը նորմալ ընթացք տալու համար։

բ) Առաջին հերթին կոլտնտեսություններ կազմակերպել Հայաստանի այն վայրերում, ուր համեմատաբար ավելի յե զարդացած ապրանքային տնտեսությունը, ակնահայտ ե գլուղի շերտավորումը և ավելի շոշափելի յե դարձել կապիտալիստական տարրերի վտանգը։ Անհրաժեշտ համարել կոլտնտեսություններ կազմակերպել նաև այն վայրերում, ուր կոլեկտիվացմամբ հնարավոր կլինի բարձրացնել տնտեսության ապրանքայնությունը։

գ) Խուսափել մանր սպառողական քնույթ կրող կոլլեկտիվ տնտեսություններ կազմակերպելուց, վորոնք հնարավորություն չեն տալիս մեքենայացում ու ռացիոնալացում մտցնելու և դրանք շահարեր տնտեսությունների վերածելու։ Համագումարն անհրաժեշտ ե գտնում ուղղություն ընդունել կազմակերպելու այնպիսի խոշոր տընտեսություններ, վորոնք շահարեր կլինին և զարգացման հեռանկարներ ունեն։

դ) Արձանագրելով տեղերում նկատվող միանգամայն վտանգավոր տենդենցը՝ անմիջապես տնտեսությունների բարդ ձեերից սկսելու առթիվ (հարյուր տոկոսով կոմմունաներ կազմակերպելը), անհրաժեշտ ե լայն բացատրական կամպանիա տանել և խոր ուրդ տալ սկսելու կոլեկտիվ տնտեսությունների պարզ ձեերից (հողոդտագործական ընկերություններ)։

5. Համադումարն արձանագրում ե, վոր մինչև
ալժմ կազմակերպված կոլտնտեսությունները միան-
դամալն հարադար են իրենց սոցիալական կազմով
(80 տոկոսը բատրակ—չքավորներ են):

Միենույն ժամանակ նկատելի յե, վոր գլուղի
միջակների վորոշ խավը դեռևս տատանվող դրության
մեջ ե և թերահավատ վերաբերմունք ունի դեպի կոլ-
տնտեսությունների հաջողությունները: Դրա հետ
միասին տեղիրում նկատվում ե թեքում՝ միջակին
կոլտնտեսությունների մեջ չընդունելու, վորի դեռ
անհրաժեշտ ե ամեն կերպ պալքարել: Առանց գյու-
ղատնտեսության կենտրոնական դեմքի ակտիվ մաս-
նակցության հնարավոր չե կենսագործել գյուղատըն-
տեսության կողեկտիվիվացման առթիվ կուսակցական
հրահանգները:

Անհրաժեշտ ե գործնականում միջակին ապա-
ցուցել, վոր կոլտնտեսությունները ավելի շահավետ
ու ձեռնուու են՝ հանդեպ անհատակ անտնտեսություն-
ների և այդպիսով ներգրավել նրանց կոլտնտեսու-
թյունների մեջ:

6. Հայաստանի յուրահատուկ պայմանները, գյու-
ղատնտեսության վերին աստիճանի հետամնացությու-
նը, թույլ ապրանքալնացումը, պրիմիտիվ արտա-
դրական միջոցները, կուլտուրական հետամնացությու-
նը և հողասակավությունը մի կողմից, կոլեկտիվների
կազմը խոշոր տոկոսով (80 %) չքավոր, բատրակ և
ինվենտարագուրք լինելու հանգամանքը մյուս կողմից,
ավելի կարևոր են դարձնում խոշոր կոլեկտիվներ
կազմակերպելու անհրաժեշտությունը, պետական ու
կոոպերատիվ որդանների և կազմակերպությունների

զեկավարության, նյութական աջակցության ուժեղացումը:

7. Կոլեկտիվ տնտեսությունները պիտի ուղղություն բռնեն սպեցիալիզացիալի լինթարկելու և զարգացնելու տնտեսության այն կուլտուրաները, վորոնք տվյալ շրջանի գլխավոր ճյուղերն են կազմում.—լիոնարդին ու նախալեռնային շրջաններում՝ կոլտնտեսություններին անասնապահական ու հացարույսերի մշակության, իսկ դաշտաբին շրջաններում՝ տեխնիքական բույսերի մշակման թեքում տալով, արդարիսին նախապես համաձայնեցնելով Հողժողկոմատի կողմից տարվող ռարսնացման հետո: Այդ տեսակետից անհրաժեշտ ե վարկավորման խնդրում ևս հիմք ընդունել վերոհիշյալ սկզբունքը:

8. Կոլտնտեսությունների և կազմի մեջնկատվող հոսունությունը բացասական և անդրադառնում նաև կայուն տնտեսություն ստեղծելու գործի վրա: Անհրաժեշտ ե կտրուկ միջոցներ ձեռք առնել տնտեսությունը կազմակերպչորեն ճիշտ հողի վրա դնելու, ուժեղացնելու կուլտկրթական աշխատանքները, միաժամանակ խնդրելով որենսդրական մարմինների համապատասխան վորոշում կալացնելու կոլեկտիվ տնտեսություններից հեռացող ու հեռացվող անդամներին հողը վերադարձնելու կարգի մասին:

9. Համագումարը կոլտնտեսությունների ուշադրությունն է հրավիրում անբաժանելի դրամագլուխուներ ստեղծելու և դրանք ուժեղացնելու խնդրի վրա, — վորոնք գոյանալու յին՝ ինչպես պետական, կոոպերատիվ որգանների կողմից տրվող անվերադարձ գումարներից և ինվենտարից, նույնպես և կոլեկտիվնե-

րի լեկամուտներից, —վորպիսին հետագայում հանդիսանալու իր հայաստանի կոլտնտեսությունների ուժեղացման ֆոնդ:

10. Գլուղական մանր տնտեսությունների կողեկանիվացումը մերտերին կապված և արտադրական միջոցների մեքենայացման հետ. խոշոր մեքենան գլուղում կոլլեկտիվացման ամենաուժեղ գործոնն ե, վորպից յեշնելով համապումարը համապատասխան որպաններին առաջադրում և կոլլեկտիվ տնտեսություններին անհրաժեշտ քանակությամբ մեքենաներով բավարարելու խնդիրը. Մեքենաների բաշխման ընթացքում առաջին հերթին պետք է բավարարել կոլլեկտիվ տնտեսությունների կարիքները Բացի այդ, անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել Հայաստանի գյուղերում խոշոր մեքենաները ռացիոնալ կերպով ոգտագործելու և ավելի շահավետ դարձնելու. Միաժամանակ մեքենամատակարարող ոգրանների ուղագրությունը հրավիրել կոլտնտեսություններին տրամադրվող մեքենաներն ապահովել անհրաժեշտ պահետի մասերուն:

11. Կոլտնտեսությունների հաջողությունները խոշոր չափով կապված են հողաշինարարության և ագրոաշխտանքների հետ, —ուստի Հայագումարը Հողմողկոմատի և տեղական մարմինների ուշադրությունն է հրավիրում՝ ուժեղացնել իրենց աժանդակությունն ու մասնակցությունը կոլտնտեսությունների աշխատանքներին:

ա) Բնդհանուր հողաշինարարության զուգընթաց արագացնել նաև ներքին հողաշինարարությունը՝ ինչպես նոր կազմակերպվող,

նու յնպես և գործող կոլտնտեսություններում, առանց վորի դժվար և կոլտնտեսություններում ազրոկուլտուր ձեռնարկումներին դիմելու:

բ) Ուժեղացնել տեղերում կոլտնտեսությունների ազրողության և ղեկավարության գործը. այդ նպատակի համար շրջզուղատնտեսները իրենց ուժերը մաքսիմալ չափով պիտի տրամադրեն կոլտնտեսությունների կազմակերպման գործին: Կոլտնտեսությունների բոլոր տեսակի արտադրական ձեռնարկումները պետք է իրականացվեն տեղական ազրոպերսոնալի անսիջական ցուցմունքներով ու ղեկավարությամբ:

գ) Կոլեկտիվիստ զյուղատնտեսների բացակայությունը մեծապես անդրադառնում և կոլտնտեսությունների ծավալման և զարգացման վրա: Այս պատճառով խնդրուել Հողժողկոմատին այս տարի ձմռանը կոլեկտիվիստ ազրոնոմների վերապատրաստման համար կազմակերպել կարճատեղասրընթացքներ:

դ) Այգեգործական շրջանների կոլեկտիվների զարգացումն անպայմանորեն կախված է ալգիների միացումից: Համագումարը գտնողում և անհրաժեշտ ուժ ժամանակին հարց հարուցելու կառավարության առաջ՝ ալգիների միացման խնդիրը քննության առնելու և մշակելու համապատասխան հրահանգներ:

իե) Միջոցներ ձեռք առնել կոլտնտեկենտրոնի և Հողժողկոմատի ազրոպերսոնալի միջոցով կազմելու 1928/29 տարում զոյություն ունեցող կոլտնտեսությունների կազմարտադրական պլանները:

ղ) Հարց հարուցել համապատասխան բարձրագույն մարմինների առաջ՝ առ արոտաշինաւրարության ընթացքում կոլտնտեսություններին բավարարել անհրաժեշտ քանակությամբ արոտներով, բ. արտոնյալ պայմաններով կոլտնտեսությունների ոգտագործման հանձնելու ֆոնդալին հողերը և անտառալին բացուտները, գ. շինարարական աշխատանքների համար տրամադրել անհրաժեշտ քանակությամբ փակտանյութեր՝ չքավոր գյուղացիության բաց թողնվող պայմաններով.

12. Աշխատանքի արտադրողականության բարձրացման ու կոլտնտեսությունների կայունացման կարեռ նախապայմաններից մեկն ել հանդիսանում ե աշխատանքի վարձատրության սկզբունքը՝ անդրաժեշտ և զեկուավել անդամների անհատական շահագրգումման սկզբունքով և անդամների վարձատրությունը կատարել ըստ աշխատանքի քանակի ու վորակի:

13. Կոլտնտեսությունների հետադարձարգացումը կախված ե նաև ազրոնոմ-կոլլեկտիվիստների կադր ստեղծելուց, վորի համար խնդրել Լուսժողկումատին՝ սկսած առաջիկա ակադեմիական տարրուց Պետ. Համալսարանի գյուղֆակին կից ունենալ կոլտնտեսությունների կաֆեդրա.

ը) Արշուսգլխվարական բոլոր դպրոցներում, մասնավոր գյուղատնտեսական, կոռպերատիվ դպրոցներում (տեխնիկումներ և գյուղայիտներ) մտցնել համապատասխան դասընթացքներ՝ կոլտնտեսությունների թեորիան ու պրակտիկան ուսուցելու համար.

բ) Խնդրել Գլխավայրուսվարչությանը կուտանշություններում կրթական աշխատանքները ուժեղացնելու համար հարկ յեղած ուշադրություն դարձնելու:

գ) Գտնել անհրաժեշտ 1928/29 տարում ստորին ցանցի աշխատողներ պատրաստելու համար Յերևանում բանալ կարճատես դասընթացքներ:

14. Համագումարը վողջունելով կառավարության ձեռնարկումները՝ կոլտնտեսությունների նյութական աջակցության խնդրում, միևնույն ժամանակ ընդուռում ե, վոր կոլտնտեսությունների աճման տեմպի ապահովումը հնարավոր ե իրենց՝ զյուղացիների սեփական միջոցների ուժեղ ներգրավմամբ (փայտավճարներ, ավանդներ և այլն),

15. Համագումարը զգուշացնում ե կոլտնտեսություններին ամեն կերպ խուսափելու տնտեսության արտադրանքը մասնավորների միջոցով վաճառելու Ապրանքները վաճառահանել միայն պետական և կոոպերատիվ որդանների միջոցով, վերջիններիս հետնախապես համապատասխան պայմանագրեր և կոնտրակտացիներ կտապելով:

Միաժամանակ Համագումարը հրավիրում է պետական ու կոոպերատիվ որդանների ուշադրությունը, կոլտնտեսություններին անհրաժեշտ ապրանքներով և մթերքներով բավարարելու խնդրի վրա:

16. Հայաստանում մեքենաոգտագործական ընկերություններին մինչ այժմ չի հաջողվել շոշափելի նվաճումներ ձեռք բերել. — կազմակերպված ընկերություններից շատերը քայլալման առաջ են կանգնած:

Յերկու տարվա վորձը ցուց տվեց, վոր նման ընկեռությունները չեն կարողանում իրենց գոյությունը պահպանել։ Անհրաժեշտ և ուղղություն բռնել աստիճանարար այդ ընկերությունները հողոգտագործման ընկերությունների վերածելու։

17. Կոլտնտեսությունների ֆինանսական բազան ուժեղացնելու, ազատ աշխատող ձեռներին աշխատանք հայթալիթելու համար, անհրաժեշտ գտնել կոլանտեսություններին, մասնավորապես խոշոր տընտեսություններին կից ոժանդակ արտադրական և վերամշակման ձեռնարկներ հիմնել (ջրաղաց, սղոցարան, արհեստանոցներ, ձիթհան և այլն)։

Միջոցներ ձեռք առնել այդ նպատակների համար կոլտնտեսություններին բաց թողնելու անհրաժեշտ քանակությամբ վարկեր։

18. Կոլտնտեսությունների ագրոնոմիական, մեքենայացման ու կազմակերպչական աշխատանքների ղեկավարությունն ուժեղացնելու, հաշվապահական գործը կանոնավորելունպատակով, անհրաժեշտ և Հայաստանի այն շրջաններում, ուր հնարավոր և կազմակերպել կոլտընտեսությունների խմբակային միություններ (групповые об'единения) ունենալով միացյալ ագրոնոմներ ու հաշվապահ հրահանգիչներ։

19. Անհրաժեշտ և, ինչպես կուս - խորհրդակին մամուլի, նույնպես և պարբերական հրատարակչությունների ուշագրությունը դարձնել կոլտնտեսությունների գաղափարը և աշխատանքները լուսաբանելու խնդրի վրա, հրատարակելով մատչելի գրականություն, խնդրել գյուղացիական «Մաճկալ» թերթի խմբագրությանը՝ հատուկ բաժին հատկացնել կոլտընտեսության շարժմանը։

20. Բոլոր կոռպերատիվ, խորհրդալին ու հասարակական կազմակերպություններն ամենալայն աջակցություն և ոժանդակություն պետք ե ցույց տան կոլեկտիվ տնտեսության շինարարության աշխատանքներին, խորագիր աղմբինիստրատիվ միջամտությունից:

21. Գործնական միջոցներ ձեռք առնել կոլեկտիվ տնտեսություններում ներզրակին չքավոր և միջակ գեղջկուհիներին (վորոնք իրենց տնտեսությունների ղեկավարներն են): Այդ նպատակի համար անհրաժեշտ ե սգտագործել նաև կոռպերացման ու վարկավորման չքավորական ֆոնդերը կոլեկտիվ տեսակեսություններում, ոժանդակել գյուղատնտեսության այն հատուկ ճյուղերի զարգացմանը, վորոնք նպաստում են տնտեսության ապրանքային ացման բարձրացման և ուր պահանջվում ե գլխավորապես կնոջ աշխատանքը (թուչնարուծություն, խոզաբուծություն, պտղաբուծություն, շերամապահություն և այլն):

22. Հատուկ ուշադրություն դարձնել Հայաստանի նոր վոռոգվող ու բնակելի գարձվող հողամասերում կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու խնդրին, և այդ հողերում տնտեսություններ բնակեցնելու և վերաբնակեցնելու նպատակով հատկացվող գումարները ծախսել այդ տնտեսությունների կոլեկտիվացման ուղղությամբ:

23. Նկատի ունենալով, վոր անքավարար են կոլետնտեսությունների բնակարանային պայմանները, իսկ նրանց տնտեսական և կուլտուրական հետազագարգացումը մեծ չափով կախված ե նաև այդ խնդրի կարգավորումից, անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առ-

նել կոլլեկտիվներին նյութական ոժանդակություն ցույց տալու, ինչպես և Հողժողկոմատի միջոցով տրամադրել կոլլեկտիվներին անհրաժեշտ ու նպատակահարմար բնակելի և տնտեսական շենքերի նախագծեր:

25. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մինչև այժմս ազգային փոքրամասնությանը անբավար չափով և ներգրավված կոլեկտիվ տնտեսությունների մեջ, անհրաժեշտ և հետագա աշխատանքների ընթացքում առավելագույն ուշադրություն դարձնել այդ բացը վերացնելու համար, առաջ քաշել կոլեկտիվիստ աշխատողներ ազգային փոքրամասնություններից, ուժեղացնելով զեկավարությունն՝ ազգային փոքրամասնությունների մեջ կազմակերպված կոլեկտիվների նկատմամբ:

ԲԱՆԱԳԵՎ

Կողնենեսուրյունների աշխատանքի կազմակերպման, վարձատրուրյան յեկ կապիտալի կուտակման ձեվերի մասին

**ԸՆԿ. ըՆԿ. Կուգնեցովի յեկ Փերակամյանի
զեկուցումների առիվ**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ, ՎԱՐՉԱ-
ՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Հայաստանում, ուր տակավին անհրաժեշտ չափով չեն ամրապնդված կոլտնտեսությունները. — դրանց սակավահողության (յուրաքանչյուր կոլտնտեսության — 51 հեկտար), կանոնավոր ցանքսաշրջանա-

ոռւթյան բացակայությանը, բնակչության զգալի տուկոսի ($61^0/0$) անզրագետ լինելու, և վերջապես, կոլտնտ. շինարարության անհրաժեշտ փորձի բացակայության պայմաններում, աշխատանքի կազմակերպումը և վարձատրության ձեռքը հանդիսանում են ամենաբարդ, դժվարին և միաժամանակ կարեոր խնդիրներից մեկը:

Այս խնդրի ճիշտ լուծումից ե կախված, ինչպես աշխատանքի արտադրողականության բարձրացումը և տնտեսության լեկամուտի աճումը, նույնպես և կոլլեկտիվ տնտեսությունների անդամների կազմի կայունությունը, կոլտնտեսության շինարարության հետագա զարգացումն ու ամրապնդումը:


2. Խորհրդային միության յերկարամյա աշխատանքի փորձը և մասնավորապես՝ մեր կոլտնտեսությունների համեմատաբար կարճ ժամանակամիջոցի աշխատանքի գործնական ստուգումը ցույց տվին—ինչպես այդ ընդդեմ և կոլտնտեսությունների համամիտութեանական առաջին համագումարը, վոր ներկա պայմաններում հավասար սպառողական սկզբունքներով աշխատանքի վարձատրման ձեռ՝ հանդիսանում ե անդամների աշխատանքի արտադրողականության բարձրացման և ընդհանուր առմամբ կոլլեկտիվ տնտեսությունների զարգացման արդիլքներից մեկը (որինակ Դարալագյազի, Դիլիջանի, մասամբ Լոռի-Փամբակի կոլտնտեսությունները) և վոր աշխատանքի ճիշտ կազմակերպման հիմնական պայմանը հանդիսանում ե՝ սահմանել աշխատանքի վարձատրման այն դիսի մի սիստեմ, վորը կոլտնտեսության զարգացման գործում շահագրգորի անդամներին:

3. Վերոհիշյալ պայմաններից լինելով, Հայա-

տանի կոլեկտիվ Տնտեսությունների առաջին Համագումարն անհրաժեշտ և համարում բոլոր կոլեկտիվ տնտեսություններում (կոմմունաներ, գյուղ. արտեներ և հողը համայնքներ) մշակող ընկերությունները) անպայմանորեն կիրառել «աշխատանքի վարձատրությունն ըստ քանակի և վորակի» սիստեմը, խրախուսելով գործավարձին անցնելը, հաշվի առնելով գործավարձն այս կամ այն ճյուղերում կիրառելու ոգտավետությունը, - սահմանելով աշխատանքի առաջին տեսակների վարձատրության նորմաններ:

4. Կոլեկտիվ տնտեսության ուղիղ դարդացման և անդամների աշխատանքի արտազլողականության բարձրացման հիմնական պայմաններից մեկը համարվում և աշխատանքի վարձատրման չափը, վորը սակայն, պետք ելի ու լի համապատասխանի կոլեկտիվ տնտեսության լեկամուտների մեծության: Կոլտնտեսության արտադրական ծրագիրը և յելքի ու մուտքի նախահաշիվը կազմելիս անհրաժեշտ և աշխատանքի վարձատրությունը բարձրացնելու հետ միասին ապահովել նաև պարտքերի անպայման վճարումը և կուլտիվ միջոցների կուտակումը:

Գործառնական տարվա ընթացքում՝ մինչև տարեվերջն անդամների կենսական կարիքները բավարարելու նպատակով, պետք է կանխավճարի ձևով բաց թողնել նրանց դրամ և տնտեսության ունեցած մթերքներից. սակայն տրված կանխավճարի չափը վողջ տարվա ընթացքում չպետք է անցնի յուրաքանչյուր անդամի համար նախատեսված վարձատրության 50—70 տոկոսից: Անդամներից հետ հաշիվները փակվում և տարեվերջին:



5. Տարեվերջի հաշիվները փուկելուց՝ զուտ յեկամուտից (դուրս յեկած նաև աշխատավարձը) կանոնադրությամբ նախատեսված դրամագլուխներին հատկացումներ անելուց հետո, մնացորդը բաժանվում է ըստ շնչերի:

Ինչ վերաբերում է կոմմունաներին, ապա այստեղ կոմմունայի անաշխատունակ անդամների ամբողջ կարիքը հոգացվում է կոմմունայի միջոցներից, իսկ աշխատող անդամների ծախքերը ծածկվում են նըրանց հասանելիք աշխատավարձի հաշվին։ Տարեվերջին, յերբ պարզվում է, վոր կոմմունայի այս կամ այն աշխատող անդամին ավելի յե հասնում, քան ծախսված են նրա վրա, այս դեպքում տարբերությունը տրվում են նրան՝ կամ նրա համաձայնությամբ թողնվում ե կոմմունայում վորպես ավանդ։ Սակայն, յեթե ծախսված ե ավելին, քան նրան հասանելիք գումարը, ապա ներկա դեպքում տարբերությունը պարտագրվում ե նրա հաշվին՝ հետագայում նրա աշխատավարձից գանձելու համար։

6. Կոլեկտիվացման յենթարկված տնտեսություններին շահագրգոհելու նպատակով, անհրաժեշտ և աշխատանքի վարձատրության կարգը վորոշելիս յուրաքանչյուր անդամի համար սահմանել կոլտնտեսության յեկամուտին և աշխատանքներին մասնակցելու վորոշ նորմա, վորի համար և կոլտնտեսությունների տարեկան արտադրական ծրագրի մեջ յուրաքանչյուր ընտանիքի համար՝ բայց նրանց շնչերի թվի՝ ապահովել համապատասխան բանվորական որեր։

7. Անհրաժեշտ ե տղամարդու և կնոջ հավասար աշխատ սնֆի հավասար վարձատրություն սահմանել։ Աշ-

խառանքը գնահատելիս անհրաժեշտ է վորոշել այնպես վոր աշխատանքի բարձր վարձատրությունը (կոպարը) պերազանցի ցածր վարձատրության վոչ ավել, քան յերկու անդամ, Այդ կարգից բացառություն ե թուրատրվում միայն մասնագիտների աշխատանքի վարձատրության նկատմամբ:

8. Անհրաժեշտ է վճռականորեն պայքարել կոլլեկտիվ աշխատանքի հիմունքների աղավաղման դեմ, վոր տեղի լեռ ունենում աշխատանքն ըստ գույքալին փայի, կամ ավանդների չափի վարձատրելու ձեռվկ:

9. Անհրաժեշտ է հատուկ ուղադրություն դարձնել բանվորական ուժի բաշխման կարգին, ծախսված աշխատանքի հաշվեառման և դրա վորակի վրա, աշխատանքի արդյունքների կանոնավոր հաշվառման, աշխատանքի պաշտպանության և աշխատակիցների վորակի բարձրացման վրա: Այդ նպատակով անհրաժեշտ ե:

ա) Կոլտնտեսություններում կատարել բանվորական ուժի բաշխում՝ կոլտնտեսության խորհրդադիր կողմից հաստատված ծրագրով:

բ) Սահմանել ծախսված աշխատանքի հաշվեառում—տարելով կամ քարտով:

գ) Սահմանել առանձին աշխատանքների գնահատում:

դ) Հավասարապես ոգտագործել կանանց և տղամարդու աշխատանքը:

յի) Անչափահասների համար սահմանել կրնատ բանվորական որություն:

զ) Ապահովել հղի կանանց ծննդաբերությունից առաջ և հետո արձակուրդ տալը՝ նը-

բանց համար միջին աշխատավարձ պահպանելով:
Թուլլ չափով համարնացված կոլտնտեսություններում հիշված ձեռնարկութիւնները պետք ե կիրառվեն,
հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները և
չպետք ե հակադրվեն տվյալ տնտեսություն ոնտեսական հնարավորություններին:

Անդամներին մասնագիտանալու հնարավորություն տալու նպատակով, անհրաժեշտ ե տնտեսության ամբողջ աշխատանքը բաժանել դաշտավարական, առասնապահական, այգեգործական, փոխադրական և այլ ճյուղերի:

Աշխատող ձեռքերը բաժանել ըստ այդ ճյուղերի, վերջիններիս պատասխանատու դարձնելով այդ ճյուղերի ամբողջ գույքի համար և խուսափել անդամներին հաճախակի մի աշխատանքից մյուսին փոխադրելուց (մանավանդ հովիվներին):

10. Համագումարը վճռականապես դիմ ե արտահայտվում վարձու բանվորական ուժի գործադրման, բացառությամբ մասնագետների: Վարձու բանվորական ուժի գործադրումը թույլատրվում ե միայն աշխատանքների յեռուն շրջանում (յեթե հնարավոր չե ավելացնել կոլտնտեսության անդամների կազմը), սակայն գործադրվող բանվորական ուժը չպետք է գերազանցի տվյալ սեզոնում անհրաժեշտ բանվորական ուժի 20 տոկոսից:

Միաժամանակ հանձնարարել կոլտնտկենուրունին հոգ տանել կոլանտեսությունների անդամներից մասնագետներ պատրաստելու (տրակտորիստների, հաշվետարների կուրսեր բանալ և այլն):

11. Մի շաբաթ կոլտնտեսություններում անդամ-

ների աշխատանքը չոգտագործվելու հետեանքով, կոլ-
տնտեսությունների կյանքում կարենոր նշանակություն
ունի անդամների դրսի աշխատանքը։ Անդամների ա-
զատ աշխատանքը դրսում ողտագործելը թուլառըր-
վում և միայն անդամների ընդհանուր ժողովի կողմից
սահմանված պայմաններով, ըստ վորում, դրսում աշ-
խատելու շրջանում այդ անդամների նյութական հա-
րաբերությունները կոլտնտեսությունների հետ վորոշ-
վում և կոլտնտեսության ընդհանուր ժողովի կողմից։

12. Աշխատանքի կազմակերպման և վարձատըր-
ման դորթը, վորը կազմական և կոլտնտեսություննուր
կազմակերպչական, անտեսական պայմանների հետ,
դժվարանում և հետեւալ պատճառներով։—

ա) Մեծ քանակությամբ փոքր չտպի կոլ-
տնտեսություններ լինելու.

բ) Կոլտնտեսությունները բավարարագույն չափով
արտադրական միջոցներով ապահոված ըլինելու.

գ) Կոլեկտիվ անտեսության մեջ շրջանա-
ռության միջոցների անբավարարության.

դ) Տնտեսությունը միակողմանի կազմա-
կերպված լինելու (կոլտնտեսությունների մեծ
մասի զիխավոր ճյուղը հանդիսանում և դաշտա-
վարությունը).

էե) Անդամների քաղաքական ու կրթական
ցածր մակարդակի և

զ) Կոլտնտեսություններում աշխատակից-
ների պատրաստի ակտիվի բացակայության հե-
տեւանքով,

Աշխատանքը ճիշտ կազմակերպելը և արտադրո-
ղականությունն ավելի բարձրացնելը հնարավոր և խո-

շոր կոլտնտեսություններում, ուր ավելի լիիվ են հաւաքանացված արտադրական միջոցները և անդամների աշխատանքը, ուր զարգացած եւ տնտեսությունը, և դրա ավելի ապրանքալին ճյուղերը նշտորեն համաձայնեցված են շրջանի տնտեսական ու բնական պայմաններին, ուր կազմակերպված են զյուղատնտեսական արտադրության մթերքների նախնական վերամշակման ձեռնարկություններ և մտցված են արտադրության նոր կատեարելագործված ձեռք (տնտեսություն մեքենայացում, բազմադաշտի անցում, աշնանահերկ, սերմազտում, ընտիր սերմերի ցանքս, անասունների ճիշտ կերակրում, ինչպես և հանքային պարարտանյութերի գործադրում, կուլտուրական ցեղ, բարդ կուլտուրաներ և այլն):

13. Աշխատանքի կազմակերպման ձեռքի գործնական ստուգումը ցույց տվեց, վոր կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման թերությունների գլխավոր պատճառներից մեկը հանդիսանում եւ տնտեսությունն առանց ծրագրի վարելը և աշխատանքների արդյունքի հաշվեառման բացակայությունը: Այս դրության հետևանքը լինում ե այն, վոր չեն զարգանում կոլտնտեսությունները, նպատակահարմար ձեռվ չեն գործադրվում բարդ մեքենաները և այլ արտադրական միջոցները, ճիշտ չի ոգտագործվում աշխատանքը և դրա հետևանքով իջնում ե աշխատանքի արտադրողականությունն ու տնտեսության յեկամուտը:

Աշխատանքի ծրագրային կազմակերպումը և բաժանումը պետք ե կիրառվի՝ այդպիսին կատարելապես համաձայնեցնելով կոլտնտեսությունը՝ արտադրական և

ֆինանսական ծրագրին, հաշվի առնելով կոլտնտեսության անդամների ու նրանց ընտանիքների համար աշխատանքի իրական արդյունքները:

ԿԱՊԻՏԱՆՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՁԵՎԵՐԸ

1. Կոլեկտիվ տնտեսությունների զարգացումը մեծ չափով կախված լինելով սեփական միջոցների չափից, համագումարը կոլեկտիվ տնտեսությունների ուշադրությունն ե հրավիրում «կապիտալների» կուտակման վրա, ըստ վորում կապիտալների փոխհարաբերությունը պետք ե կառուցել ճշտորեն նախատեսնված ծրագրով, հաշվի առնելով կոլեկտիվ տընտեսությունների ձևերն ու տնտեսության ուղղությունը, — վորից յիշնելով անհրաժեշտ ե.

ա) Հիմնական և շրջանառու միջոցների փոխհարաբերությունը նախատեսնելայնպես, վորովեսզի հատկապես գարնան և ամառային շրջանում տնտեսության մեջ բավարար չափով շրջանառու միջոցներ լինեն, վորպիսին պետք ե գորանա սեփական շրջանառության միջոցներ ստեղծելու ճանապարհով, նույնպես և կարճատև վարկի ոգնությամբ:

բ) Սեփական և փոխառու միջոցների փոխհարաբերությունը այնպես պետք ե լինի, վորպեսզի ապահովվի կոլտնտեսության աստիճանաբար փոխարինել սեփականով:

2. Նկատի առնելով տնտեսության ճիշտ վարե-

բելու գործում ամորտիզացիոն ֆոնդ ստեղծելու հըսկալական նշանակությունը, անհրաժեշտ համարել ստեղծելու այդպիսին լուրաքանչյուր տարի՝ բոլոր կոլեկտիվներում։

3. Կոլեկտիվ տնտեսությ. միջոցները նպատակահարմար ոգտագործելու, համայնացման աճումն ապահովելու, ավելի բարձր յեկամուտ ստանալու և այդ յեկամուտը նպատակահարմար բաշխելու համար, անհրաժեշտ ե ձգտել առանձին անդամներին պատկանող արտադրական միջոցներն ամբողջովին համայնացված ֆոնդի մեջ ընդգրկելուն, տնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքը համայնացնելուն։

Այդ նպատակով կոլտնտեսություններում համայնացրած միջոցների ստեղծումը պետք ե կատարվի հետևյալ կարգով. —

ա) Կոմունաներում համայնացված ֆոնդը պետք ե ընդգրկի իր մեջ տնտեսության բոլոր արտադրական միջոցները և տարեկան յեկամուտը՝ ամբողջապես։

Առանձին անդամների միջոցների կուտակումը պետք ե կանոնավորել այնպես, վորպեսզի չխրախուսվի կոլտնտեսություններից հեռանալու և անհատական տնտեսություններու կազմելու հնարավորությունը։

բ) Արտելներում և ընկերություններում անհրաժեշտ ե համայնացված միջոցներն անհատականների հետ համակցել այնպես, վորապես արտադրական միջոցների մեծ մասը, ինչպես և մաքուր յեկամուտի մնացորդները գնան կոլեկտիվի համայնացված ֆոնդին։

4. Կոլեկտիվներում ավելի մեծ չափով համայ-

նացված միջոցների կուտակման պայմաններ՝ սաեղծելու, այլ և կոլեկտիվ տնտեսության զարգացման հետ միասին կոլտնտեսության մեջ մտնող չքավորության շահերը ապահովելու համար, անհրաժեշտ ե.

ա) Մեծացնել Փայավճարենքի չափն այն հաշվով, վորապեսդի դա միանգամայն բավարլինի համայնացված տնտեսությունը վարելու զործը սկսելու համար, սակայն փայավճարների այդ ավելացումը չպետք է արգելք հանդիսանա չքավորության կոլեկտիվացման գործին:

Չքավորներին կոլտնտեսությ. մեջ մտնելու դրույթը լինուն ստեղծելու նպատակով, անհրաժեշտ ե չքավորության համար փայավճարների մուծման լերկարատե ժամկետ սահմանել (մինչեւ 10 տարի) և միաժամանակ անհրաժեշտ համարել միջնորդել համապատասխան որգանների առաջ, չքավորների կոլեկտիվացման ֆոնդ ստեղծելու: Կոլլեկտիվ անտեսությունը իրենց տարեկան լեկամուտի 3—5 տոկոսի սահմաններում պետք ե հատկացնեն այդ ֆոնդին:

Մուծված փայերից գուրք լեղած միջոցների մնացորդները պետք ե մնան կոլտնտեսությունում վորապես ավանդ: Տնտեսության լեկամուտների բաշխման միջոցին ավանդների համար վոչ մի արտօնություն և վճար չի տրվում:

բ) Պետական և կոոպերատիվ մարմիններից կոլտնտեսություններին բաց թողնվող վարկերը պետք ե ծախսվեն համաշնացված տընտեսության զարգացման համար: Վարկավորման ընթացքում, վարկավորող որ-

գանները հաշվի առնելով անբաժանելի ֆոնդերի մեծությունը, առավելություն պետք է տան այն կոլտնտեսություններին, վորոնք անբաժանելի ֆոնդերի խոշոր կուտակումներ ունեն:

5. Համայնացված խոշոր գլուղատնտեսական ձեռնարկությունների սոցիալիստական տարրերի կանոնավոր և մշտական զարգացումն ապահովելու, կոլտնտեսության յեկամուտն ու աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով, անհրաժեշտ և նկութական կայուն բազա ստեղծելով վորից յելնելով առանձին կարեռություն և ստանում կոլտնտեսություններում անբաժանելի ֆոնդեր (կապիտալ) ստեղծելու Անբաժանելի ֆոնդերը պետք է կազմվեն —

ա) Պետական գույքերից, վորոնք մշտական աշխատավորական ոգտագործման համար հանձված են կոլտնտեսությանը.

բ) Ցուրաքանչյուր տարվա յիկամուտների հատկացումներից.

գ) Անվերադ մուծումներից, պարզեատրումներից և այլ միջոցներից:

6. Անբաժանելի ֆոնդի մասահանման չափը պետք է բարձր լինի այնքան, վորքան բարձր և կոլտնտեսության յեկամուտը և վորքան խորն և համայնացումը արտադրության մեջ:

7. Անբաժանելի ֆոնդը կարող է մասնակցել կոլտնտեսությունների ըոլոր դործառքներին, սակայն անհրաժեշտ և այդ ֆոնդը դնել զվաճացորապես հիմնական կապիտալների մեջ:

8. Անբաժանելի ֆոնդն յենթակա չերաժամ-

ման անդամների մեջ և անձեռմխելի է հանդիսանում պարտքերի պահանջները քննելիս, անգամ կոլտնտեսությունը լիկվիդացիայի յենթարկելիս, և ալդպիսին վերջին դեպքում հանձնվում է համապատասխան կոլտնտեսությունը կազմակերպելու համար։

ՎՈՐՈՁԱԽՄ

Հայաստանի կոլլեկտիվ սնենությունների կենցոն կազմակերպելու մասին

Նկատի ունենողով այն հանգամանքը, վոր Հայրածանի կոլլեկտիվ տնտեսությունների ցանցը բավականին ընդարձակվել են, — դրանց լրիվ սպասարկման և ճիշտ ղեկավարման համար Համագումարն անհրաժեշտ է գտնում կազմակերպելու Հայաստանի Կոլլեկտիվ սնենությունների Միուրյուն՝ իր հատուկ կենցոնով և ընդունում է կոլեցիենտրոնի կանոնադրությունը հետեւյալ փոփոխություններով։ —

Կանոնադրության 10-րդ կետը լրացնել հետեւյալով, — «Մուտքի վճարը սահմանել կոլտնտեսության մուտքի վճարների ընդհանուր գումարի 20 տոկոսի չափով»։

12-րդ կետը լրացվում է. — «Անդամավճարի գումարը սահմանել կոլտնտեսության տարեկան ընդհայեկամուտի կես տոկոսի չափով»։

— 22 րդ կետում՝ «վոչ պակաս, քան տարին մեկ անդամ» արտահայտությունը փոխել հետեւյալ կերպ. — «տարեկան մեկ անգամ»։

Ը Ն Տ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Համագումարի կողմից ընտրվում ե Կոլտնտեսանունի Խորհուրդ, Վարչություն և Վեբստուգիչ հանձնաժողով.

Խորհրդի մեջ ընտրվում են՝ ընկ. ընկ. Ամատունի, Ս. Սարգսյան, Բ. Հարությունյան, Գր. Աթարեկյան, Բ. Վարդանյան, Մ. Պողոսյան, Ա. Բունիաթյան, Պ. Դուկասյան, Լ. Ղազարյան, Ա. Ներսեսյան, Ի. Սոբորով, Զ. Դանելյան, Ցե. Բաղդասարյան, Ալ. Յեղիկարյան, Վ. Թարախչյան, Ն. Ռաջարտվ, Վ. Ավետիսյան, Խ. Հակոբյան, Գ. Կիրակոսյան. Ն. Մեհրաբյան, Խ. Յերիցյան, Զ. Յեփրեմյան և Ա. Մուրադյան:

Վարչության անդամներ ընտրվում են՝ ընկ. ընկ. Հ. Մկրտչյան, Հ. Սիլանյան, Ա. Աբրահամյան, Մ. Վարդանյան և Գր. Աղամալյան:

Թեկնածուներ՝ ընկ. ընկ. Ս. Թորոսյան և Ն. Սարգսյան:

Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ՝ ընկ. ընկ. Նիկոլ Հովհաննիսյան, Հ. Գրիգորյան և Խ. Վարդանյան, Թեկնածու՝ Վ. Կարապետյան:

Խորհրդի նախագահ՝ ընտրվում է ընկ. Պամատունի. Վարչության նախագահ՝ ընկ. Հայկ Մկրտչյան.

ՎՈՐՈՁՈՒՄ

**ՀԱԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻԲ ԿՈՄԻՏԵՑԻ ՅԵՎ,
ԺՈՂՈՎՀԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

Կոլեկտիվ ռեանուրյունների մասին

1928 թ. դեկտեմբերի 15-ին

Ի զարգացումն և ի կատարումն ԽՍՀՄ կենտրոնականի և ժողովականի 1927 թ. մարտի 16-ի «Կոլեկտիվ տնտեսությունների մասին» վորոշման (Որ. ժող. 1927 թ. № 15, հոդ. 161) կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.—

Գյուղի չքավորությանն ոգնություն հասցնելու, քաղաքի և գյուղի մերձեցումը ամրացնելու և գյուղուցիության հիմնական մասսաներին չքավորության հետ կապելու նպատակով՝ առաջնակարգ հերթական խնդիր համարել կոլեկտիվ տնտեսությունների զարգացումը և ուժեղացումը, վորի համար անհրաժեշտ ե—

1. Հանձնարարել Հողժողկոմատին՝

ա) Հանձնել կոլեկտիվ տնտեսություններին՝ աշխատավական ոգտագործության համար պետական գույքերի ֆոնդից նրանց վարձով տրված հողերը, այն պայմանով, վոր կոլեկտիվ անտեսության լիկվիդացիայից հետո հողերը վերադարձվեն պետական հողային ֆոնդին։ Զիջել կոլեկտիվ տնտեսությունների կողմից ոգտագործվող հողերի վարձավճարի ապառիկները.

- բ) Առանց հատուցման կոլլեկտիվ տնտեսություններին հանձնել պետական մարմիններից ստացած գոյքը (ինվենտար, շենքեր և այլն) իբրև նրանց անդաժան դրագլուխ։ Զիջել կոլլեկտիվ տնտեսությունների վրա այդ գույքից մնացած բոլոր ապահովաները։
- գ) Նոր կազմակերպվող կոլլեկտիվ տնտեսությունների համար հողեր զատելու հարցում ղեկավարվել ՀՄԽՀ Կենտգործկոմի 1928 թ. ոգոստոսի 22-ի «Կոլլեկտիվ տնտեսությունների հողերը զատելու—կենտրոնացնելու մասին» վորոշումով («Խորհրդ. Հայաստան» 1928 թ. հոկտեմբեր 3-ին, № 229)։
- դ) Պետական անտառային ֆոնդից ուղարկելու հարցում կոլլեկտիվ տնտեսություններին վերապահել չքավոր բնակչության համար սահմանված արտոնությունները։ Ցեղական նշանակություն ունեցող անտառներից ոգտավելու հարցում տակ կոլլեկտիվ տնտեսություններին հողային հասարակությունների համար սահմանված իրավունքները։
- լի) Մինչև 1929 թ. գարունը վերջացնել գոյություն ունեցող կոլլեկտիվ տնտեսությունների միջոյնուղյան ու ներքին հողաշինարարությունը և հետագայում լուրաքանչյուր տարվա հողաշինարարական ծրագրի մեջ մըտցնել ծրագիր կազմելուց առաջ կազմակերպված բոլոր նոր կոլլեկտիվ տնտեսությունների հողաշինարարությունը։ Կոլլեկտիվ

անտեսությունների հողաշինարարության
ծախքերը կատարել ի հաշիվ Հողժողկոմա-
տին հողաշինարարության համար արված
գումարների.

գ) Միջոցներ ձեռք առնել ապահովելու կոլեկ-
տիվ տնտեսությունների սպասարկությունը
դավառական և գավառակալին գյուղատնտես-
ների կողմից, մասնավորապես տնտեսու-
թյունների կազմակերպչական-արտադրա-
կան ծրագիրը կազմելու բնագավառում:

2. Մոտ ժամանակում առանց հատուցման հանձ-
նել կոլեկտիվ տնտեսություններին նրանց տերրի-
տորիայի վրա գտնվող բոլոր արդյունարերական և
ոժանդակ ձեռնարկությունները և ապահովել կոլեկտիվ
տնտեսությունների տերրիտորալին կից գտնվող և
նրանց հետ կապված արդյունարերական և ոժանդակ
ձեռնարկությունները կոլեկտիվ տնտեսություններին
հանձնելու արտօնյալ պայմանները:

Հանձնարարել Հողժողկոմատին կոլեկտիվ Տըն-
տեսությունների կենտրոնի հետ միասին մշակել հա-
մապատասխան հրահանգ արդյունարերական և ոժան-
դակ ձեռնարկությունները կոլեկտիվ տնտեսություն-
ներին հանձնելու պայմանների մասին:

3. Հանձնարարել Հողժողկոմատին և Հայդյուղ-
կոոպին մեքենաների մատակարարման և այլ զործի
վարկավորման ծրագիրը կազմելիս առաջին հերթին
ապահովել կոլեկտիվ տնտեսություններին բարդ
գյուղատնտեսական մեքենաներով:

4. Ի նկատի ունենալով կոլեկտիվ տնտեսու-
թյունների շարժման աճումն ու նրա կազմակերպչա-

կան զեկավարությունն ուժեղացնելու և խորացնելու կարերությունը, անհրաժեշտ համարել կազմակերպել կոլեկտիվ տնտեսությունների հանրապետական կենտրոն (Կոլ. Տնտ. կենտրոն) հետեւալ ֆունկցիաներով.— կազմակերպչական-ազգունումիական զեկավարություն, կոլեկտիվ տնտեսությունների ներկայացուցչություն կոռպերացիալի և պետական տնտեսության ընդհանուր սիստեմի մեջ և կոլեկտիվ տնտեսությունների զարգացման ծրագրավիճ կապի իրազործում այդ սիստեմի հետ:

5. Կոլեկտիվ տնտեսությունների կենտրոնի աշխատանքի համար նյութական բազա ստեղծելու նպատակով հանձնարարել Ֆինժողկոմատին բացի գյուղատնտեսական կոռպերացիալի հատկացումներից կոլեկտիվ տնտեսությունների ապահարատի պահպանման համար համապատասխան միջոցներ հատկացնել նաև պետական բյուջեից:

6. Հարկային արտոնությունների ասպարիզում հանձնարարել համապատասխան մարսիններին զեկավարվել այդ մասին գործող որենքներով:

7. Կազմել զյուղատնտեսական կոլեկտիվների յերկարատուե վարկավորման ֆոնդ, հատկացնելով դրա համար բացի համամիութենական բյուջեյի միջոցներից նաև հատուկ միջոցներ հանրապետական բյուջեյից: Հանձնարարել Ֆինժողկոմատին Գյուղբանկի և կոլեկտիվ տնտեսությունների կենտրոնի հետ միասին մշակել այդ ֆոնդն ոգտագործնելու կանոններ:

8. Սակավազոր գյուղական տնտեսություններին և բատրակներին կոլեկտիվ տնտեսությունների մեջ ընդունելու պահմանները թեթևացնելու նպատակով

գյուղատնտեսության վարկավորման ծրագրի մեջ նախատեսնել հատուկ լերկաբառե վարկեր ալդ տընտեսությանների փայերը վճարելու համար։ Փալավճարների փոնդը կազմելու հարցում զեկավարվել ԽԱՀՄ Փողկոմխորհի 1928 թ. սեպտեմբերի 8-ի վորոշումով։ Փայալճարների վտրկի գումարը 1928—29 թվի համար սահմանել 100,000 ռուբ.

9. Անհրաժեշտ համարել կոլեկտիվ անտեսությունների վարկավորումը կատարել թե անմիջականորեն Գյուղբանկի և թե այն տեղական գյուղատընտեսական վարկալին ընկերությունների միջոցով, վորոնց մեջ կոլեկտիվ անտեսությունները մանում են իրեն անդամներ։

10. Անհրաժեշտ համարելով կոլեկտիվ անտեսությունների անդամների և վարչությունների սոցիալական ալֆմյան կազմի և նրանց զարգացման ռուսունասիրությունը, հանձնարարել կենտվիճվարքն սիստեմատիկարեն կատարել կոլեկտիվ անտեսությունների հետազոտություններ։

11. Հանձնարարել Սպառկոռպերացիայի Միությանը և Գյուղկոռպերացիայի մասնագիտական կենտրոններին (Այգգինկոռպ, Պանիր-յուղկինտրոն և այլն) իրենց վրա վերցնել կոլեկտիվ անտեսությունների արտադրանքների իրացումը և նրանց անհրաժեշտապրանքներ մատակարարելու գործը։

Սրան համեմատ՝ կոլեկտիվ անտեսությունները բոլոր կոռպերատիվների հետ հավասար հիմունքներով մանում են գյուղկոռպերացիայի միության և նրա մասնագիտական կենտրոնների մեջ, վորպես անդամ։

12. Հանձնարարել կուսաքաղկոմատին՝

- ա) Սկսած 1928—29 ուսումնական տարուց պառա-
զատնախական և մանկավարժական բարձ-
րագույն դպրոցների, տեխնիկակումների, գյուղ-
յերիտ, դպրոցների, ինչպես նաև սոց. դաստ-
վարչության գյուղական դպրոցների ուսում-
նական պլանի մեջ մտցնել խոշոր կոլեկտիվ
հոգագործության վերաբերյալ հարցերի՝ ու-
վանդումը՝ հատուկ ծրագրերով.
- բ) Պետհամալսարանի գյուղատնտեսական ֆա-
կուլտետի ծրագրի մեջ մտցնել գյուղատըն-
տեսության կոլեկտիվաց ճան ավանդում,
ինչպես նաև կաղմակերպել հատուկ կարճա-
տե դասընթացքներ գյուղատնտես-կոլեկ-
տիվաբրներ պատրաստելու համար:
- զ) Կոլեկտիվ տնտեսությունների յերիտասար-
դության շարքերից գյուղատնտես-կոլեկ-
տիվաբրներ պատրաստելու համար բարձ-
րագույն դպրոցում, բանֆակում և գյուղա-
տընտեսական տեխնիկումներում հատուկ
տեղեր հատկացնել նրանց:
- դ) Գյուղկոռավերացիայի մարմինների հետ միա-
սին ուժիգացնել կոլեկտիվ տնտեսություն-
ներում կատարվող կուլտ-կրթական աշխա-
տանքները:

ԱՅ. Առաջաբեկել Լուսմողկոմատին, Առժողկոմա-
տին, Աղյալմողկոմատին և Հայկոոպին ամենալայն
առջակցություն յուց տալ կոլեկտիվ տնտեսություն-
ներին նրանց մեջ զանազան տեսակի կուլտուրական-
գիշեցաղացին ձեռնարկումներ. (մանկավարատեղներ,

ասուրները հաստաբակաւն ճաշտքանները, հիվանդանոցները և այլն) կիրարկելու ասպարիզում:

14. Հանձնաբարել Անդրառեարի Հայաստանի կիազրությանը և Հայկոսպին հատուկ ուշադրություն դարձնել կուլեկտիվ անտեսություններին անհրաժեշտ բանակությամբ արդյունաբերական ապրանքներ և հացմասակարարելու հարցի վրա:

15. Առաջարկել այն բոլոր հաստատություններին, վորոնց այդ վորոշմամբ հանձնաբարություններն արվում, այդ վորոշման հրապարակման որից մեկ ամիս ժամանակամիջոցում ներկայացնել մողկոմիոր հին իրենց վրա գրված հանձնաբարությունները կենացործելու կոնկրետ առաջարկները:

Կենացրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահի
տեղակալ՝ Տ. Շ. Գառաջան

Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի Նախագահ՝
Ս. Շեր Գաբրիելյան

Կենացրոնական Գործադիր Կոմիտեյի քարտու-



Յերեմիան



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Օրադ.



FL0045800

(124.)



Գիւն Ե 10 Կ.